Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Н. К. П. С.
Հ. Հ. Ժ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1926 г.

885:6
2-11
ԱՂ

08 APR 2010

Ն. Կ. Պ. Ս.
Ֆ. Հ. Փ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

1003
11047

ՀՐԱՀԱՆԳ

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
имени Масиняна
*Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1926 г.

10 SEP 2013
55.166

Գրատ. № 1081 (գ.) Տիրաժ· 300 Պատ. № 4471

Հայպետտպոլիգրաֆի 2-րդ տպարան

ՀՐԱՀԱՆԳ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Դիստանցիան բաժանվում է գծաշրջանների, գծաշրջանները—գծամասերի։

Գծաշրջանների բաժանումը հաստատվում է Տեղական տրանսպորտի Վարչության կողմից, իսկ գծամասերի—Դիստպետների։

Յուրաքանչյուր գծամասը հսկելու համար նշանակվում է հատուկ վերանորոգիչ։

2. Վերանորոգիչը նշանակվում է իրեն հանձնված գծամասի սահմաններում գտնվող ճանապարհը և նրա վրա յեղած բոլոր կառուցվածքները հսկելու համար։

3. Այն անձնավորությունը, որը նշանակվում է վերանորոգչի պաշտոնով, պետք է բավարարի հետևյալ պայմանները՝

ա) Հասակով 21 տարուց վոչ պակաս։

Ծանոթություն.— Այն անձինք,

վորոնք վերջացրել են տեխնիկական ուսումնարաններ, կարող են ընդունվել վերանորոգչի պաշտոնով 18 տարեկան հասակից։

բ) 50 տարուց վոչ ավել։

Ծանոթություն.— Այդ կարգադրությունը չի վերաբերվում ծառայության մեջ գտնվող վերանորոգիչներին։

գ) Ֆիզիքապես չունենալ այնպիսի թերություն, վորը խոչընդոտ լինի վերանորոգչի պարտականությունները տանելու մեջ։

Ծանոթություն — Ծառայության ընդունվողը պետք է ներկայացնի բժշկական վկայական։

դ) Լինել գրագետ (կարդալ, գրել և հաշվել)։

Ծանոթություն.— 1. Գրագետների բացակայության դեպքում կարելի է ընդունել վորպես բացառություն անգրագետներին։

Ծանոթություն.—11. Ծառայության մեջ գտնվողների համար գրագետ լինելը պարտադիր չե։

4 Վերանորոգիչը անմիջապես հպատակվում է իր ճանվարպետին։

Դրանից անկախ նա պարտավոր է կատարելու Տեխնիկի, Դիսպետչերի և Ստուգող անձանց բոլոր ցուցմունքները։

Վերանորոգիչը կատարում է առանց հետաձգելու հիշյալ անձանց կարգադրությունները։ վորոնց մասին նա առաջին հնարավոր դեպքում հաղորդում է ճանվարպետին։

5. Վերանորոգչի ծառայության ընդունելը, տեղափոխելը և արձակելը կատարում է դիսպետչերը ընդհանուր կարգով ճանվարպետի միջնորդությամբ։

6. Ճանվարպետը անձամբ հանձնում է վերանորոգչին հրահանգները և կանոնները նրա ստորագրությամբ և բացատրում է թե հանձնելու ժամանակ և թե ամեն անգամ, յերբ վերանորոգիչը դիմում է նրան։

7. Վերանորոգիչը չի կարող առարկել այն մասին, վոր նա ծանոթ չե սույն հրահանգի հետ, յեթե նա ստացել է։

8. Վերանորոգչին արձակուրդ է տրվում ընդհանուր հիմունքներով։

Գծամասից ժամանակավոր բացակա

լինելը վոչ ավել 2 որից կարող է թույլատրել ճանվարպետը ամեն անգամ հաղորդելով դորա մասին Դիսպետին։ Առանց ճանվարպետի թույլտվության վերանորոգիչը իրավունք չունի բացակա լինելու իր գծամասից։

Դիսպետի կամ ճանվարպետի կարգադրությամբ ժամանակավորապես կարելի է տեղափոխել վերանորոգչին մեկ գծամասից մյուսը իր գծաշրջանի սահմաններում այդ գծամասերի արտելները ուժեղացնելու համար։

9. Հիվանդության կամ արձակուրդ գնալու դեպքում վերանորոգիչը իր գծամասը հանձնում է հարևան վերանորոգիչներից մեկին կամ մի սուրհ անձնավորության, ճանվարպետի կարգադրությամբ։

10. Հանկարծակի հիվանդանալու դեպքում վերանորոգիչը ինքնուրույն հանձնում է իր պաշտոնը հարևան վերանորոգչին կամ վստահելի որավարձ բանվորին, վորը իսկույնևյետ հաղորդում է դորա մասին ճանվարպետին։

11. Եթե վերանորոգիչը ցանկանում

է թողնել իր պաշտոնը, նա պարտավոր է դորա մասին հայտնել ճանվարպետին վոչ ուշ քան յերկու շաբաթ առաջ։ Վերանորոգիչը կարող է ազատվել պաշտոնից միայն Դիսպետի թույլատվությամբ, հանձնելով փոխարինողին իր մոտ գտնվող բոլոր իրերը, գործիքները և նյութերը լիովին, վերջիններիս պակասելու դեպքում նա պատասխանատու է որենքի առաջ։

Պաշտոնից հեռանալու կամ տեղափոխվելու դեպքում վերանորոգիչը հանձնում է իր մոտ գտնված գույքը փոխարինողին ճանվարպետի ներկայությամբ ըստ ցուցակի, ցույց տալով գույքի քանակը և դրությունը հանձնելու ժամանակ։

12. Իր պաշտոնական գործունեության ժամանակ վերանորոգիչը պարտավոր է ղեկավարվել սույն հրահանգով և դիստանցիայում գոյություն ունեցող հրամաններով, որենքներով և կարգադրություններով։ Սույն հրահանգով և այլ որենքներով չը նախատեսված դեպքերում վերանորոգիչը պետք է դիմի ճանվարպետին ցուցմունքներ և բացատրություն ստանալու համար։

13. Իր պաշտոնական պարտականութիւնները կատարելիս վերանորոգիչը պետք է ունենա հատուկ սահմանված կրծքանշան, ազգանշանի կանաչ գրոշակ և իր պարտականութիւնները ճիշտ կատարելու համար բոլոր անհրաժեշտ գործիքները և իրերը։

Հիշյալ գործիքները և իրերը չունենալու կամ սարք չը լինելու դեպքում նա պետք է անհապաղ հայտնի ճանվարպետին։

14. Բացի հանգստյան և տոն օրերից վերանորոգիչը պարտավոր է ամեն օր վորոշված ժամին անցնել աշխատանքի։

Յեթե ճանվարպետը անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար պահանջի հանգստյան և տոն օրերին վորոշված ժամից դուրս ցերեկը կամ գիշերը աշխատելու, վերանորոգիչը պարտավոր է կատարել անհապաղ և առանց հակաճառելու։

15. Կողմնակի անձանց նկատմամբ վերանորոգիչը պետք է լինի չափազանց քաղաքավարի, միևնույն ժամանակ հաստատությամբ և կարուկ կերպով պետք է նրանցից պահանջի կատարելու իր բոլոր օրինավոր պահանջները։ Յեթե նրանք չեն կա-

մենում յենթարկվել տրված պահանջներին, վերանորոգիչը պետք է դիմի տեղական իշխանությանը և այդ դեպքի մասին հաղորդի ճանվարպետին։

16. Գծամասի ընդհանուր հսկողության վերաբերմամբ վերանորոգիչը պարտավոր է շրջելու իր գծամասը համաձայն հատուկ դրա համար հրահանգով ցույց տված կարգի ճանվարպետի ցուցմունքով։

17. Սառցահոսանքի, հեղեղի և ուրիշ աղետների ժամանակ վերանորոգիչը պարտավոր է ամեն օր դիտել ճանապարհը, խողովակները, արհեստական կառուցվածքները, հենապատերը և այլն, վորպեսզի իր ժամանակին հնարավորություն լինի չարիքի առաջն առնելու և յերթևեկությունը չը դադարեցնելու և գիծը ու կառուցվածքները կործանելուց ազատելու համար։

18. Յուրաքանչյուր հեղեղից հետո վերանորոգիչը անհապաղ մեկնում է գծամասի այն վայրերը, վորոնք ըստ նախորդ տարիների փորձերի յենթակա են վտանգի և ուշադրությամբ քննելով այդ վայրերը համապատասխան միջոցներ է ձեռք առնում

յերթևեկությունը չը դադարեցնելու համար։

19. Անձրևների և հեղեղների ժամանակ վերանորոգիչը պետք է ուշադրությամբ դիտի այն արհեստական կառուցվածքները, վորոնց մոտ հավաքվում է մեծ քանակությամբ ջուր, ուշադրություն դարձնի ափերը ամրացնող և ջրին հոսանք տվող կառուցվածքներին, առուներին և ուղերվներին, վորոնք ջրի արագ հոսանքից կարող են վտանգի յենթարկվել։

20. Թիփու և առատ ձյան ժամանակ վերանորոգիչը պարտավոր է դիտելու թե այն վայրերը, վորոնք յենթակա են ձյունով կտրվելու և թե այն տեղերը, վորտեղ տրված են ցանկապատեր, յերթևեկությունը չը դադարեցնելու համար։

21. Ճանապարհները դիտելու ժամանակ վերանորոգիչը պարտավոր է՝

ա) Ուշադրությամբ քննել ճանապարհի պաստառը, կամուրջները, զառիվայրերը, առվակները, կողերը, ճանապարհի կեղևը և բոլոր արհեստական կառուցվածքները, մասնավորապես հետևել, չի նստել արդյոք պաստառը, չի նկատվում ճեղքվածներ և

թափվածքներ լիծկերի կամ քանդվածքների զառիվայրերում, հետևել կամուրջների, խողովակների, հենապատերի, բանդերի մասերում յերևան յեկող ճեղքվածքներ և նրանց զարգացումը, չեն ողողվում արդյոք կամուրջների, խողովակների, հենապատերի և այլ կառուցվածքների հիմքերը, հետևել, վոր հիշյալ կառուցվածքների կիլոմետրների և մյուս համարները չը փչանան։

Իր բոլոր նկատումների մասին վերանորոգիչը պարտավոր է հաղորդել ճանվարպետին մյուս որից վոչ ուշ, իսկ այն հանգամանքների մասին, վորոնք վտանգավոր են և կարող են դադարեցնել յերթևեկությունը, վերանորոգիչը պարտավոր է անհապաղ հաղորդել ճանվարպետին կամ դիստպետին։

բ) Ուղղել գծամասի և կառուցվածքների փչացած տեղերը, իսկ յեթե իր միջոցներով հնարավորություն չը լինի, այդ դեպքում ապահովել վտանգավոր տեղերը։

գ) Յեթե գծամասի վրա կամ ոտարացման մասում հրդեհ առաջանա, վերանորոգիչը պարտավոր է միջոցներ ձեռք առնել

անմիջապես հանդցնելու համար։

գ) Հետևել, որ կողմնակի անձինք չը մտնեն արհեստական կառուցվածքները, գիծը, ոտարացման մասի սահմաններում գտնվող ծառերը և այլն։

Պահանջել, որ ավտոմեքենաները և սայլերը չը խախտեն յերթևեկության կանոնները։

յե) Յեթե ավտոմեքենան կամ սայլը որևե մասը փչանալու պատճառով կանգ է առնում ճանապարհին, միջոցներ ձեռք առնել և ոգնության գալ յերթևեկությունը չը դադարեցնելու համար։

22. Վերանորոգիչը պարտավոր է կատարել այն բոլոր աշխատանքները, որոնցից կախված է պաստառի և արհեստական կառուցվածքների կանոնավոր դրությունը և ապահովել աշխատանքի տեղը, մասնավորապես՝

ա) Հետևել, որ ջուրը չը կանգնի ճանապարհի վրա, յեթե նկատվում է այդպիսի դրություն, անմիջապես ջրի առաջը քաց անել։

բ) Մինչուչը կատարել առվակների

և առուների վերաբերմամբ։

գ) Առվակների և պաստառի վրա թափված հողակույտերը, փլակատները մաքրել։

դ) Խճուղու կողերը կանոնավոր պահել, հարթելով թումբերը, մաքրելով պաստառը ցեխից, բաց անելով նորը կամ մաքրելով հին ծաքառները և այլն։

ժե) Ճանվարպետի ցուցմունքներով հնձել կողերի և զառիվայրերի վրա ընող խոտերը։

զ) Հետևել, որ ճանապարհի կեղևը միշտ մաքուր լինի, այսինքն, սրբել խճուղու վրա յեղած փոշին, ցեխը, հավաքել քարերը, գլորվող խիճը և կողմնակի առարկաները։

ը) Հետևել, որ խճուղու կեղևը լինի միշտ հարթված, ուրեմն յերևան յեկող փոսերը, անիվների հետքերը իսկույն լցնել, ջրել և նստացնել։

թ) Հետևել, որ կամուրջների տախտակամածները լինեն կանոնավոր և հարկ յեղած դեպքում իսկույն կարգի բերել ձեռքի տակ յեղած միջոցներով։

ժ) Հակահրդեհային գործիքները (կիսա-

տակառները, սրբիչները) կանոնավոր պահել և իր ժամանակին կիսատակառները լցնել ջրով։

ի) Հետևել, որ ոռոարացման մասում դարսած նյութերը չը գողանան, դարսվեն սահմանված տեղում, մասնավորապես խճի և քարի կոները լինեն խճուղի կեղևից դուրս, հակառակ դեպքում պահանջել տեղափոխելու սահմանված տեղը։

լ) Ճանվարպետի հանձնարարությամբ վերանորոգիչը պարտավոր է կատարել պատատի և արհեստական կառուցվածքների վերաբերմամբ բոլոր աշխատանքները։

23. Յեթե վերանորոգիչը չի կարող կատարել վերև հիշված աշխատանքները, նա հաղորդում է ճանվարպետին բանվորներ ուղարկելու համար։

24. Վերանորոգչի համար որոշված է 8 ժամյա աշխատանք։

25. Վերանորոգիչը ղեկավարում է բանվորական խմբակների աշխատանքները, յեթե ճանվարպետը հանձնարարել է նրան այդ բանը։

Նման աշխատանքներ տանելու դեպքում վերանորոգիչը պարտավոր է՝

ա) Կատարել ճանվարպետի բոլոր ցուցմունքները և կարգադրությունները աշխատանքների կարգի վերաբերմամբ։

բ) Հետևել, որ բանվորները իր ժամանակին սկսեն աշխատելը և հանգստանան միայն որոշված ժամերին։

գ) Հետևել, որ յուրաքանչյուր աշխատանքը վերջացնելուց հետո բոլոր գործիքները և նյութերը դարսվեն համապատասխան պահեստում։

26 Վերանորոգիչը պարտավոր է մաքուր պահել իր բնակարանը, բակը, այգին, նմանապես հետևել, որ որավարձ բանվորները նույնպես մաքուր պահեն իրենց հանրակացարանները։

27. Վերանորոգիչը իրավունք չունի վորևե փոփոխություն մտցնել իր և որավարձ բանվորների բնակարանում առանց դիստպետի թույլտվության։

Յեթե բնակարանը վերանորոգման կարիք է զգում, վերանորոգիչը պարտավոր է հաղորդել դորա մասին ճանվարպետին։

28. Վերանորոգչին հատկացրած բնա-

կարանում բացի նրա կնոջից յերեխաներից և այն անձանց, վորոնք նրա հաշվին են ապրում, կողմնակի անձինք կարող են ապրել միայն դիստպետի թույլտվությամբ։

29. Վերանորոգիչը պարտավոր է՝

ա) Հետևել, վոր ոտարացման գիծը չը խախտվի, վոր կողմնակի անձինք անիրավաբար չը գրավեն ոտարացման գոտին, վոր ոտարացման գոտու սահմանի նշանները միշտ լինեն իրենց տեղը, իսկ փչացածների մասին իր ժամանակին հայտնել ճանվարպետին։

բ) Հետևել, վոր ստորացման գոտու մոտ մասնավոր շենքեր, պահեստներ, ագարակներ կառուցվեն միայն համաձայն դրա մասին գոյություն ունեցող որենքների, վորի խախտման դեպքում իսկույն հաղորդել ճանվարպետին։

30. Առանց դիստպետի թույլտվության վերանորոգչին արգելվում է ոտարացման գոտու սահմաններում վորևե շենք, ցանկապատ կառուցել, բանջարանոց ունենալ և այլն։

31. Վերանորոգիչը պատասխանատու

1003
11047

է բոլոր գործիքների և նյութերի համար, վորոնք հանձնվում են նրան ճանվարպետի կողմից խճուղու և արհեստական կառուցվածքների վերանորոգման աշխատանքները տանելու համար, նմանապես պատասխանատու է նրան հանձնված վառելափայտի, նավթի համար։

32. Վերանորոգիչը պարտավոր է հաշվառման վերցնել բոլոր նյութերը, ինվենտարը, հաղորդելով ճանվարպետին—ինչ քանակությամբ, վո՞րտեղ և ի՞նչ տեսակի նյութեր է գործադրված։

Ճանապարհի վերանորոգման համար անհրաժեշտ նյութերը վերանորոգիչը պարտավոր է նախորոք պահանջել ճանվարպետից և հոգալ, վոր պահեստումը լրացնվի նյութերի նորմալ քանակը, վորը պարբերաբար նա պետք է ստուգի։

Վերանորոգիչը պարտավոր է հոգացողությամբ վերաբերվել դեպի իրեն հանձնված առարկաները։

Վերանորոգման յենթակա գործիքները հանձնվում են ճանվարպետին նորոգելու, իսկ բոլորովին անպետքները—փոխարինելու համար։

33. Աշխատանքի ժամանակ վերանորոգիչը պետք է որինակ լինի որավարձ բանվորների համար և պահանջի նրանց ամբողջ աշխատանք և բարեխիղճ վերաբերմունք, նմանապես հետևել, որ բանվորները հոգացողությամբ վերաբերվեն դեպի իրենց հանձնված գործիքները և նյութերը, գործադրելով նրանց իր տեղում։

34. Վերանորոգիչը, ինչպես և ամեն մեկ աշխատակից, իրավունք չունի ոգտագործել բանվորին իր ոգտին։

35. Սույն հրահանգը խախտող վերանորոգիչը յենթակա է պատժի համաձայն գոյություն ունեցող որենսգրության։

Յեթե վերանորոգչի պաշտոնական հանցանքը ապացուցված է, նա յենթարկվում է քրեական դատի համաձայն գոյություն ունեցող որենսգրության։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
G.S.P.R. Public Library
7/II. 1922
ԱՄԵՆԱ. Մասնաճյուղ
Ա. ՍՅԱՍՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0235740

55.166